մանատարութեան բռնած վարանոտ կամ անբարեացակամ դիրքը արդար դժգոհութիւն էր պատճառում հայերին։ Մարտ 26-ին Հայաստանի կառավարութիւնը զօր. Թոմսընին ներկայացրեց մի ընդարձակ յուշագիր, որով պահանջում էր անյապաղ լուծել Ղարաբաղի, Կարսի ու Շարուրի և ներդաղթի խնդիրները, ինչպէս նաև պարենաւորման, հաղորդակցութեան, տնտեսական ու զինուորական մի շարք հարցեր։

Մասնաւորապէս սուր վրդովում էր առաջ բերում անգլիացիների գործելակերպը Զանգեզուր—Ղարաբաղի և Կարսի հարցերում։ Կարսը այդ ժամանակ կառավարւում էր Թիւրքերի նշանակած տեղական կառավարութեան՝ Շուրայի ձեռքով, որը խիստ թշնամական էր տրամադրւած դէպի հայերը և աշխատում էր Կարսում պահել Թիւրքիայի տիրապետութիւնը կամ, եթէ այդ անհնար է, ստեղծել Կարսի, Բաթումի և Ախալցխայի շրջաններից առանձին անկախ պետութիւն՝ Հարաւ-Արևմտեան Անդրկովկաս անունով։ Անգլիացիք չէին ուզում զրգռել մահմեդականներին և դանազան պատրւակներով արգելք էին լինում, որ հայերը գրաւեն Կարսը։ Հայաստանի կառավարութեան յամառ պնդումների վրա, 1919թ. յունւ. 8-ին, Արևմտեան Անդրկ. բրիտանական ուժերի հրամանատար զօր. Ֆորեստիէ-Ուօկերի և Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանի միջև կնքւեց Կարսի մասին մի համաձայնութիւն, որով, մինչև հաշտութեան դաշնագրի ստորագրումը, Կարսում պիտի նշանակւէր անգլիական զինուորական նահանգապետ, քաղաքացիական իշխանութիւնը պիտի կազմւէր հայերից և զինուորական նահանգապետի ենթակայ՝ վարէր պիտի քաղաքի ու նահանգի քաղաքացիական գործերը։ Հայկական պաշտօնէութիւնը պէտք է պատրաստ լինէր Ալեքսանդրապոլում և յունւ. 12-ին զինւ. նահանգապետի հետ պիտի անցնէր Կարս։ Համաձայնագրի մէջ մանրամասն նշանակւած էին երկաթուղու և հեռագրի ու փոստի թուրքերից փոխանցելու աստիճաններն ու կառավարութեան եղանակը. — մինչև Կարս բոլորովին հայ պաշտօնեաներ, Կարսում՝ խառն, սահմանում՝ թուրք-անգլիական՝ զինւ. նահանգապետի հսկողութեան տակ։

Համաձայնագրի 10րդ և 11րդ կէտերում ամփոփւած էր ոչ-հայ տարրի կառավարութեան ձևը. յիշւում էր, որ մահմեդականները վախենում են հայկական վարչութիւնից, հետևաբար, անհրաժեշտ է գործել զգուշութեամբ և ցրել ամէն վախ ցոյց տալու համար, որ հայերը ընդունակ են մոռանալու ցեղային նախապաշարումները, երբ որ իշխանութեան գլուխ են կանգնում»։ Մասնաւորապէս հրահանգում էր խիստ լինել ժանդարմների գործած ճնշումների և բռնութիւնների դէմ. «Սա կը լինի հիանալի յաջողութիւն հայկական իշխանութիւնների համար և կառավարութիւնը արժանի կը լինի դաշնակից պետութիւնների շնորհաւորութեան, եթէ մինչև Անդրկովկասի ապագայի որոշումը հաշտութեան խորհրդաժողովի կողմից, անդորրութիւնը չխախտի»։ (10րդ կէտ)։